

ՀՈՒՆԱԿԱՆ „ԷՖԻՄԵՐԻՍ“ ԹԵՐԹԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղեքսանդրիոս հունական մեծ օրաթերթը՝ «Էֆիմերիս» հրատարակած է մեր հունական ժրագրան աշխատակից ընկեր Բյուզանդ Տյուկկերյանի մեկ ընդարձակ հոդվածը հետևյալ խորագրերնեով տակ. «Կրոնական շարժումը Հայաստանի մեջ» — «Էջմիածնի Հայոց Կաթողիկոսին ընտրությունը»:

Գրության մեջ պատմական ծանոթություններ տրված են Մայր Աթոռի և Քրիստոնեության իբր պետական կրոնը Հայոց մեջ մոտեցին մասին, Ս. Գրիգոր Լուսավորիչի և Տրդատ Թագավորի նախաձեռնությամբ: Խոսված է աշխարհի բոլոր հայկական թեմերուն կրոնական և աշխարհական պատգամավորներուն մեկնումին մասին

Հայաստան, Խորհ. Միության և դաշնակից երկիրներու ընծայած դուրսվայանց շնորհիվ: Վեր է առնված Հայաստանի փայլուն մասնակցությունը դաշնակից պատերազմական ճիգին: Խոսված է Հայաստանի հսկայական առաջադիմության մասին ամեն մարդի մեջ — մշակութային, կրթական, ճարտարապետական և այլն: Ակնարկված է հայկական դատին, տր սեղանի վրա է դարձյալ, և հայկական հողային պահանջներուն: Հիշատակված են Հունահայոց Առաջնորդ Մազլումյան Ս.-ի հայտարարությունները հույն ազնիվ ժողովուրդին մասին և Հունահայոց առաջին հերթին Հայաստան ներգաղթելու կարելիությունը և այլն: (ՎԱԵՆ» քիվ 8101 1945 թ.)

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՑՑԱՆ

ԱՐԱՍԿԱՆԲ ՄԸ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՂԱՏՄՈՒԹՆԵՆ

Շատ կարևոր պատմություն մը ունի Կիպրոս կղզին, որ իր «Կիպրոս» անունն զատ ղեռ 12 անուններով ծանոթ է պատմության մեջ: Իր անունը կստանա հրեերեն, «cofber բառն, որ բույսի մը անունն է:

Քրիստոսի թվականն դարեր առաջ այս կղզին բնակչությունը մինչև 3 միլիոն բարձրացած էր, բայց այժմ հազիվ 400.000 բնակչություն ունի:

Միջին դարերուն, Հայկական գաղութը ստուար էր և ուներ 4—5 հայկական գյուղեր, հայկական վանքեր, եկեղեցիներ ու եպիսկոպոսական երկու անկախ թեմեր: Այժմ այս հայագյուղերը օտարներով բնակված են ու հազիվ քանի մը ավերակներ կհիշեցնեն հայկական հին հիշատակները: Այս գյուղերն են, ցարդ կպահի իր հիշատակելի անունը «Արմենոսորի», որ կը նշանակի «Հայագյուղ»:

Հայերի արդի թիվը 4000-ի մոտ է: Մինչև 1936 թվականը, Կիպրոսի թեմն ուներ իր արքեպիսկոպոս թեմակալ առաջնորդը, հանձինս Տ. Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյանի, որ վերջին եղավ Մեծի Տանն. Կիլիկիո կաթողիկոսը:

Կիպրոսի կարևոր քաղաքներուն մեջ գյուղություն ունեն հայ եկեղեցիներ ու հայ վարժարաններ. հոս վաղաշունչավոր են միայն երկու քահանայներ, իսկ նոր առաջնորդի մը գալուստը շատ անհրաժեշտ է: Հոս կարծես հիշատակել, որ Կիպրոսի մայրաքաղաքին մոտ կգտնվի Մելքոնյան կըրթական հաստատությունը, որ ընդհանուր

հիացման արժանի կարևոր հաստատություն մըն է ու պատիվ կգերե կիպրոսահայ գաղութին:

Կիպրոսի գաղութը իր ակիզը դրած ըլլալ կկարծի թ դարեն: Հայոց հնագույն եկեղեցին ու մենաստանն էր Ֆամակուստա քաղաքին մեջ գտնվող «Կանչուր Սուրբ Աստուածածին»-ին վանքը, ուր բնակված են հայ բարձրաստիճան եկեղեցականներ՝ ներսն կամբրոնացին, որ իր հունարենը զոտացնելու համար Կիպրոս ժամանած էր, թագոս արքայիսկոպոս, որ 1179 թվականին ներկա գտնված էր Հոմիկլայի նշանավոր համալսարանի մեծ ժողովին՝ պատասխանելու համար հունաց կայսեր ու Կոստանդնուպոլսո տիեզերական պատրիարքին եկեղեցիներու միութեան շուրջ հայոց եկած հրավերին համար: Սույն մենաստանին մեջ նշանավոր հայ բարձրաստիճան եկեղեցականներ զբաղված էին ձեռագիրներ ու գրական գործեր պատրաստելով, ինչպես կհիշե պատմությունը:

Կիպրոսի հայոց արդի նշանավորագույն եկեղեցին է Նիկոսիո Սուրբ Աստուածածին եկեղեցին, որ կոկիկ ու ջնորհալի ձև մը ունի: Այս է կիպրահայոց արդի առաջնորդանիստ եկեղեցին, ուր պատմականաբար են քանի մը տասնյակ արքեպիսկոպոս, եպիսկոպոս ու վարդապետ առաջնորդներ 16-րդ դարեն ի վեր: Նույնիսկ պաշտոնն թափված պատրիարքներ ալ իբր առաջնորդ ժամանած են Կիպրոս:

Հիշատակության արժանի է նախ Կիպրոսի

հայոց «Սուրբ Մակարա» վանքը, որ լեռնալուսն կողմին վրա կգտնվի ու հանդիման է Միջերկրականի կապույտ ալիքներուն։ Այս վանքը հայոց ձեռքը անցած է 15-րդ դարուն, իսկ նախապես զպատկերներու մենաստան էր։ Այս մենաստանն էլ ունեցած է իր դրասեր վարդապետները, որոնցմե ոմանք ձեռագիր պատմադրությունով ըզբաղված էին երբեմն։

Կիպրոս կղզին ավելի մեծ է Կորսիկային ու Կրետենն, բայց փոքր է Սիկիլիային։ Այս կղզին իբր նախ հռչակալի ու հետո փյունիկյան գաղութավայր հարուստ է դասական դիցաբանությամբ։ Ձայն դրաված են եղևառաքինները, ասորիները, պարսիկները, հռոմեացիները ու Բյուզանդիոնի ինքնակալները, որոնցմե վերջ կարգը եկավ լատիններուն (խաչակրությանց առիթով), թուրքերուն ու ամենեն հետո անգլիացիներուն։ Անգլիացիք, երրորդ խաչակրության առթիվ, (1191 թվականին) քանի մը շարժով գրաված էին Կիպրոս կղզին։ Անգլիոն նշանավոր խաչակիր վեհապետ Ռիչարդ Անյուսթատիսը-ը 1191 թվականին հաղթելով ամբողջ հույն կառավարչին, որ իսահակ Կոմենենոս կոչվեց ու հակառակ էր խաչակիր բանակին, գրավեց Կիպրոսը։ Անգլիոն թագավորը նույն տարվա մայիս ամսվա մեջ ամուսնացավ Կիպրոսի Ամաթուս քաղաքին մեջ՝ Պերենկարիա թագուհիին հետ, ու այս ամուսնության ինքնահայր, եղած էր խաչակիր բանակին դաշնակից ՀԱՅՈՑ ԼԵՎՈՆ Բ ԹԱՄԱԿՈՐԸ (1186—1219)։ Կիպրոսի անպարկեշտ կառավարիչը, որ իր Բյուզանդիոնի տերը ուրանալով, ինքզինքը «Կիպրոսի կայսր» անվանած էր, դերի ընկավ Անգլիացի թագավորին ձեռքը։ Անգլիոն թագավորը Կիպրոսը փաճառեց 100.000 ոսկիի առաճարակալ ասպետներուն, սորա իրենց հարգին Կիպրոսը հանձնեցին նրդասպանի դահազուրկ թագավոր Գվիդոն Լուսինյանին, 1192 թվականին, որուն հարստությունը շարունակվեցավ մինչև 1489 թվականը։

Հունական հիշատակները շատ ստվար են, որովհետև Կիպրոս կղզին ուներ հունական թագավորություններ։

Կիպրոսի հույն թագավորներն ոմանք գերազնիվ հուշերով կներկայանան պատմությանը Կիպրոսի Սալամիս քաղաքին թագավոր (Զեյրեն) Էվագորասը 5-րդ դարուն (Ն. Ք.) հաղթական հանդիսացած էր պարսից զորավոր վեհապետին դեմ։ Կիպրոսի ուրիշ թագավոր մը բուն Հունաստանի Ա-

ղամեմոն թագավորին պատերազմական զբաժ մը նվիրած էր Տրովադայի համահելլենական պատերազմի նախորդակին։ Իսկ ուրիշ թագավոր մը, Կիպրոսի Լամպուսա քաղաքին թագավոր Բիդիոտրատոսն իր արքայական սուրբ նվիրած էր Մեծն Ալեքսանդր Մակեդոնացիին, երբ ան Կիպրոսն կանցնեք պարտական թագավորության դեմ պատերազմելու համար։

Կիպրոսի հունական եկեղեցին մինչև 1222 թվականը ուներ 15 հունական եպիսկոպոսական թեմեր։ Բայց լատինական Գրիգորիան շրջանին Գարտինալ Պելակիոս հունական 15 եպիսկոպոսությունները ջնջելով կաղմակերպեց միայն 4 մետրոպոլիտական թեմ, որոնց գլխավորը, կամ «Համայն Կիպրոսի արքեպիսկոպոսը» կը բնակի Նիկոսի մեջ ու իր հրամանին ներքև ունի մյուս երեք եպիսկոպոսները։

Կիպրոսի հույն եկեղեցին, իբր Որթոտոքս հունական եկեղեցիին կարևոր մեկ անդամը, ունի կարևոր առանձնաշնորհումներ, որոնք իրեն բաշխվեցան Կոստանտնուպոլսո հույն նշանավոր Կայսեր՝ Ջեննինի կողմէ՝ հինգերորդ դարուն։

Կիպրոսի հունաց արքեպիսկոպոսը նախ անկախ է հունական մյուս պատրիարքներեն ու կայսերական հրովարտակով իրավունք ունի իր անունը ստորագրելու կարմիր մեղանով (նման թագավորներուն ու հայոց կաթողիկոսներուն), իրավունք ունի նաև կրելու արքայական մական ու ծիրանի փրկոն, Արդոնք Կիպրոսի մեջ կկիրարկեն 478 թվականին ի վեր ու այս իրավունքները շտապակոխվեցան ոչ Կիպրոսը գրավող թուրքերուն կողմ (1570-ին), ոչ ալ անոր վերջնական տերը համարվող անգլիացիներուն կողմ, որոնք 1878-ին ի վեր Կիպրոսի տերն են։

Ահա այսպիսի պատմական ու կարևոր կղզի մը մեջ կրնակեն հայերը 9-րդ դարեն սկսյալ ու շատ հայրենասեր, եկեղեցասեր ու գրասեր ժողովուրդը մը հանդիսացած են ու միշտ հետաքրքրվող են մայր հայրենիքով ու Հայաստանյայց եկեղեցիով։

Բնկ բնիկ հույները, իբր Օրթոտոքս մեծ եկեղեցվո նախանձախնդիր քրիստոնյաներ, մեծ ոգևորությամբ կհիշատակեն, թե Ռուսիո եկեղեցին ալ, իբր Օրթոտոքս եկեղեցի, կպատկանի հունական Օրթոտոքս մեծ եկեղեցիին ու հետևաբար կրունքով անոնք եղբայրներ են իրարու հետ։

Նիկոսիա (Կիպրոս կղզի)

